ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/94

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Մասնակցությամբ՝
Մասնակից՝ «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝ Տ. Լաճիկյանի,
Պատվիրատու՝ Վարչապետի աշխատակազմի ներկայացուցիչ՝ Ռ. Ասատրյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 19.06.2019թ. թիվ /26/10293-2019 գրությամբ «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Վարչապետի աշխատակազմի 14.06.2019թ. թիվ 02/18.3/27876-2019 գրության հիման վրա, 19.06.2019թ. «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

2. **<u>Վարչապետի աշխատակազմի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.**

Վարչապետի աշխատակազմը 14.06.2019թ. թիվ 02/18.3/27876-2019 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Վարչապետի աշխատակազմը Հայաստանի Հանրապետության կառավարության ենթակա շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կարիքների համար արտադրանքի շուկայում ավտոմոբիլային բենզինի փորձարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով ս.թ. ապրիլի 26-ին հայտարարել է «ՎԱՇՎՏՄ-ԳՀԾՁԲ-19/7» ծածկագրով ընթացակարգ, որի արդյունքում ընտրված մասնակից է ճանաչվել «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն): Սակայն, ընկերության կողմից ստորագրված և պատվիրատուին ներկայացված պայմանագրի նախագծում գնվող ծառայության տեխնիկական բնութագիրը չի համապատասխանել ընթացակարգի հրավերով նախատեսված բնութագրին, ինչի արդյունքում պատվիրատուն այն վերադարձրել է ընկերությանը՝ առաջարկելով շտկել անհամապատասխանությունը: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված ժամանակահատվածում Ընկերությունը չի ներկայացրել ճշտված պայմանագիրը:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերը, Ընկերությունը զրկվել է «ՎԱՇՎՏՄ-ԳՀԾՁԲ-19/7-1» ծածկագրով պայմանագիրը ստորագրելու իրավունքից:»:

3. **<u>«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.**

Բողոքներ քննող անձը 21.06.2019թ.-ին գրությամբ դիմել է «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների

նախարարության կողմից 19.06.2019թ. թիվ /26/10293-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր կարծիքը:

«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն ներկայացնելով գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

«Ինչպես Ձեզ հայտնի է ՀՀ ֆինանսների նախարարությունը գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ին /այսուհետ՝ Ընկերություն/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերը նշվածի վերաբերյալ հայտնում ենք, որ

1. ՀՀ վարչապետի աշխատակազմի /այսուհետ՝ նաև Պատվիրատու/ կողմից արտադրանքի շուկայում ավտոմոբիլային բենզինի փորձարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով ս/թ-ի ապրիլի 26-ին հրապարակվել է ՎԱՇՎՏՄ-ԳՀԾՁԲ-19/7 ծածկագրով գնման ընթացակարգի հրավեր /այսուհեւո՝ հրավեր/: Հրավերում առկա պայմանագրի նախագծի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրում նկարագրված է եղել այն բոլոր անհրաժեշտ փորձարկումների տեսակները, ինչպես նաև պահանջ, որ փորձարկումն իրականացնող մարմինը պետք է հավատարմագրված և նշանակված լինի համաձայն՝ հավատարմագրման մասին օրենքի և 2012թ սեպտեմբերի 6-ի կառավարության 1201-Ն որոշման: Տվյալ պարագայում, քանի որ ծառայությունների ձեռքբերման ընթացակարգերի կիրառման դեպքում օրենսդիրը չի սահմանել հնարավորություն մասնակիցների համար՝ ներկայացնելու իրենց կողմից առաջարկվող տեխնիկական բնութագրերը և հետագա անցանկալի զարգացումներից խուսափելու ակնկալիքով՝ ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի /գործում առկա է/ «ծառայության անվանումը» դաշտում նշվել է ավտոմոբիլային բենզինի այն փորձարկումների տեսակները, որոնց համար Ընկերությունը վերը նշված իրավանորմերի համաձայն հավատարմագրված է և նշանակված ու հնարավորությունն ունի իրականացնելու: Նման քայլով Ընկերությունն ակնկալել է, որ Պատվիրատուն կամ կմերժի Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը՝ հաշվի առնելով, որ Ընկերության կողմից առաջարկվում է Հրավերի պայմանագրի նախագծի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով առաջարկված տեխնիկական բնութագրից տարբերվող տեխնիկական բնութագիր, իսկ չափաբաժինների անվանումը չի համապատասխանում հրավերով սահմանված չափաբաժնի անվանմանը և փաստացի

Ընկերության կողմից առաջարկվել է այլ ծառայության տեսակ կամ Պատվիրատուն կընդունի Ընկերության առաջարկը տվյալ փորձակումների մասով և հետագայում պայմանագիրը կն վի միայն առաջարկված փորձակումների տեսակների իրականացման համար:

Արդյունքում Պատվիրատուի կողմից Ընկերությունը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած, իսկ այնուհետև նաև ընտրված մասնակի, ինչով փաստացի Պատվիրատուն ընդունել է Ընկերության կողմից ներկայացված առաջարկը:

Ինչից հետո Պատվիրատուն առաջարկել է Ընկերությանը կնքել պայմանագիր՝ ներկայացնելով պայմանագրի նախագծի մի տարբերակ, որում ներառված են եղել ի սկզբանե հրավերի պայմանագրի նախագծի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրում նախատեսված բոլոր տեսակի փորձարկումները՝ չնայած այն բանի, որ Ընկերությունը իր կողմից ներկայացված առաջարկում հստակ նշել էր փորձարկումների այն տեսակները, որոնք վերջինս իրավասու էր իրականացնելու:

Ընկերությունը, ստանալով վերը նշված պայմանագրի նախագիծը, խմբագրել է այն, պայմանագրի տեխնիկական բնութագրում սահմանելով միայն այն տեսակի փորձարկումները, որոնց համար Ընկերության կողմից ներկայացվել էր գնային առաջարկ, ստորագրել այն և ներկայացրել Պատվիրատուին: Սակայն Պատվիրատուի կողմից այն մերժվել է, ինչը գտնում ենք, որ իրավաչափ չէ: Եթե Պատվիրատուն ի սկզբանե համաձայն չի եղել Ընկերության կողմից ներկայացված առաջարկին, ապա նա ուներ բոլոր իրավական լծակները (ՀՀ կառավարության 2017թ.-ի հունիսի 1-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 41-րդ կետ)՝ մերժելու Ընկերության կողմից ներկայացված առաջարկը՝ առանց Ընկերությանը նման իրավիճակում գցելու:

Տվյալ դեպքում մեր կարծիքով բացակայում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերը, մասնավորապես Ընկերությունը չի հրաժարվել կնքել պայմանագիր, այլ նա համաձայն է կնքել պայմանագիր իր կողմից նախապես ներկայացված պայմաններով, որոնք, ինչպես արդեն փաստել ենք, ընդունվել են Պատվիրատուի կողմից:»:

Ելնելով վերոգրյալներից, Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

4. **<u>ՍՑ-LO-2019/94 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>**

ՀՀ Վարչապետի աշխատակազմի (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար արտադրանքի շուկայում ավտոմոբիլային բենզինի փորձարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՎԱՇՎՏՄ-ԳՀԾՁԲ-19/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել միայն «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.05.2019թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.05.2019թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված/հաղթող մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.05.2019թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2.1 կետի համաձայն՝ որոշվել է Մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Պատվիրատուն առաջարկել է Ընկերությանը կնքել պայմանագիր՝ ներկայացնելով հրավերի պայմանագրի նախագծի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրում նախատեսված բոլոր տեսակի փորձարկումները:

Ընկերությունը իր կողմից ներկայացված գնային առաջարկում հստակ նշել էր փորձարկումների այն տեսակները, որոնք վերջինս իրավասու էր իրականացնելու:

Ընկերությունը, ստանալով վերը նշված պայմանագրի նախագիծը, խմբագրել է այն, պայմանագրի տեխնիկական բնութագրում սահմանելով միայն այն տեսակի փորձարկումները, որոնց համար Ընկերության կողմից ներկայացվել էր գնային առաջարկ, ստորագրել այն և ներկայացրել Պատվիրատուին:

Ընկերության կողմից ստորագրված և պատվիրատուին ներկայացված պայմանագրի նախագծում գնվող ծառայության տեխնիկական բնութագիրը չի համապատասխանել ընթացակարգի հրավերով նախատեսված բնութագրին, ինչի արդյունքում պատվիրատուն այն վերադարձրել է ընկերությանը՝ առաջարկելով շտկել անհամապատասխանությունը:

Ընկերությունը չի ներկայացրել ճշտված պայմանագիրը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.06.2019թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընկերությունը զրկվել է «ՎԱՇՎՏՄ-ԳՀԾՁԲ-19/7-1» ծածկագրով պայմանագիրը ստորագրելու իրավունքից, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերը:

Ընկերությունը ներկայացրած գնային առաջարկի «ծառայության անվանումը» դաշտում նշել է՝ «Ավտոմոբիլային բենզինի 100 փորձանմուշի փորձարկում/հետևյալ ցուցանիշների համար-

1. Օկտանային թիվը որոշված հետազոտական մեթոդով
2. Արոմատիկ ածխաջրածինների ծավալային մասը
3. Բենզինի հագեցած գոլորշիների ճնշումը
4. Կապարի կոնցենտրացիա
5. Բենզոլի ծավալային մասը
6. Ծծմբի պարունակությունը

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.06.2019թ. թիվ /26/10288-2019 գրությամբ «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հորվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: **Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:**

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի N 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է

նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ Վարչապետի աշխատակազմի կարիքների համար արտադրանքի շուկայում ավտոմոբիլային բենզինի փորձարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված թիվ «ՎԱՇՎՏՄ-ԳՀԾՁԲ-19/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած միակ մասնակից «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.05.2019թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրության հիման վրա 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, այնուհետև նույն չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված/հաղթող մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.05.2019թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2.1 կետի համաձայն՝ որոշվել է Մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Պատվիրատուն առաջարկել է Ընկերությանը կնքել պայմանագիր՝ ներկայացնելով հրավերի պայմանագրի նախագծի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրում նախատեսված բոլոր տեսակի փորձարկումները:

Ընկերությունը իր կողմից ներկայացված առաջարկում հստակ նշել էր փորձարկումների այն տեսակները, որոնք վերջինս իրավասու էր իրականացնելու:

Ընկերությունը, ստանալով վերը նշված պայմանագրի նախագիծը, խմբագրել է այն, պայմանագրի տեխնիկական բնութագրում սահմանելով միայն այն տեսակի փորձարկումները, որոնց համար Ընկերության կողմից ներկայացվել էր գնային առաջարկ, ստորագրել այն և ներկայացրել Պատվիրատուին:

Ընկերության կողմից ստորագրված և պատվիրատուին ներկայացված պայմանագրի նախագծում գնվող ծառայության տեխնիկական բնութագիրը չի համապատասխանել ընթացակարգի հրավերով նախատեսված բնութագրին, ինչի արդյունքում պատվիրատուն այն վերադարձրել է Ընկերությանը՝ առաջարկելով շտկել անհամապատասխանությունը:

Ընկերությունը չի ներկայացրել ճշտված պայմանագիրը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.06.2019թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընկերությունը զրկվել է «ՎԱՇՎՏՄ-ԳՀԾՁԲ-19/7-1» ծածկագրով պայմանագիրը ստորագրելու իրավունքից, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերը:

Ընկերությունը ներկայացրած գնային առաջարկի «ծառայության անվանումը» դաշտում նշել է՝ «Ավտոմոբիլային բենզինի 100 փորձանմուշի փորձարկում/հետևյալ ցուցանիշների համար-

1. Օկտանային թիվը որոշված հետազոտական մեթոդով
2. Արոմատիկ ածխաջրծինների ծավալային մասը
3. Բենզինի հագեցած գոլորշիների ճնշումը
4. Կապարի կոնցենտրացիա
5. Բենզոլի ծավալային մասը
6. Ծծմբի պարունակությունը

Վերոգրայլի հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Ընկերության գործողություններում առկա չեն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, այն է՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Տվյալ դեպքում, Ընկերությունը ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացնելու պահից սկսած ներկայացրել է այն հստակ ծառայությունների ծավալը, որոնք կարող էին իրականացվել վերջինիս կողմից: Ավելին՝ Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացրել նաև կնքված և ստորագրված պայմանագիր՝ ի հավաստումն գնման գործընթացի շրջանակում իր կողմից ստանձնած պարտավորությունների կատարման:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից ձեռնարկվել են հնարավոր բոլոր գործողություններն՝ ուղղված գնումների գործընացին

ստանձնած պարտավորությունների կատարմանը, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված, հնարավոր չի եղել դրանք հասցնել տրամաբանական ավարտին:

Ուստի, նման պայմաններում, Մասնակցի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, և որպես հետևանք «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.06.2019թ. թիվ /26/10293-2019 գրությամբ «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**